

ԴԻԱՆԱ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆԻ «ԿԱՆԱԶ ՄԱՐԳԱԳԵՏՆԻ ՀՄԱՅՔԸ» ՎԵՊԻ ՊԱՐՈՒՆԱԿՆԵՐՈՒՄ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (Հայաստան)

բ. գ. թ., դրցնւոր

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ Վ. Պարտիզոնու անվան հայ նոր եւ տրագոյն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ քանասիրական ֆակուլտետի փոխդեկան

Բանալի բառեր – կանաչ մարգագետին, երեակայական կերպարներ, պարունակ, սուրահ, աղետյալ երկիր, այլաբանական պատկեր, ապաշխարել, գրանցամատյան, ջրասույգ:

Key words: green meadow, imaginary characters, folder, surah, disaster country, allegorical image, repent, register-book, submerged in water.

Դիանա Համբարձումյանի «Կանաչ մարգագետնի հմայքը» վեպի տողատակերում ասելիքը գրողի մեջ խմորվել է տեւական ժամանակ, սակայն հայրենիքում վերջին տարիների փոթորկալի իրադարձությունները ունեցել են նյութերն ամբողջացնելու եւ ներկայացնելու անմիջական ներգործություն: Վեպի վերջում հեղինակն արձանագրում է 11.09.2019 ամսաթիվը¹, սակայն տպագրվել է մեր ժողովրդի համար ողբերգական տարեթվի՝ 2020-ի ամռանը, պատերազմական գործողություններից ու նվաստացուցիչ պարտություններից առաջ, ուստի վեպում ներկայացվող մի շարք այլաբանական պատկերների պերճախոս ենթաբնագրերը հեղինակային կանխատեսումներ են, որոնք առաջին անգամ չէ, որ նկատելի են Համբարձումյանի արձակում:

Երեակայական կերպարների գործողություններին զուգահեռ՝ հեղինակային խորհրդածությունները ներկայացվում են անտիկ, քրիստոնեական մշակույթների, միջակական պատկերների, ժողովրդական բառ

¹ Նշված ամսաթվից ութ տարի առաջ նույն օրը՝ 11.09.2001, «Ալ-Քաիդա» ահաբեկչական կազմակերպության մահապարտ անդամների կողմից տեղի է ունեցել ահաբեկիչների հարձակումների շարան ԱՄՆ-ում:

ու բանի, համաշխարհային մշակույթի հին ու նոր, անգամ գողական աշխարհին հատուկ արքետիպային կերպարների զուգակցմամբ:

Ցանկացած գրող ունի իր պոտենցիալ ընթերցողը. այս վեպը հասցեագրված է գրական էլիտային: Յուրաքանչյուր դրվագ կամ կերպար ընկալելի դառնալու համար պահանջում է համակարգված աշխատանք: Այս ստեղծագործությունն այն երկերից չէ, որը, հեղինակի խոսքերով, «գրվել է... մի քանի տարում, կարդացվում է մի քանի ժամում եւ պատմվում՝ մի քանի րոպեում»², այլ ճիշտ հակառակը: Վեպի տարբեր հատվածների վերլուծության արդյունքում կուտակվում են մտացածին պատկերներ, հետո նյութը դառնում է հնարավորինս հասկանալի: Ավելին՝ ստեղծագործությունը միանման չեն կարող ըմբռնել տարբեր աշխարհայացքի, կրթության ու անգամ տարբեր մշակույթ կրող ընթերցողները: Սա էլ վեպի ամենահետաքրքիր առավելություններից է. ազատ է ընթերցողն իր ընկալումներում, կարելի է ասել՝ որքան ընթերցող, այնքան վերլուծման, ընկալման նոր մակարդակներ:

Գլխավոր կերպարները վաղեմի ընկերներ Նայոդն ու Քննողն են, որոնք իրենց նախկին գրասենյակի նախկին տնօրենի կազմած թղթապանակի նյութերի ցուցումով աշխարհի կործանումից հետո կանգուն են պահել հուսո հանգրվան լաբորատորիան, փորձարկել նոր միգամածությունը եւ ստեղծել այլմոլորակայինների կերպարանքներով ու Երկիր մոլորակում աննչացած կնոջ ու տղամարդու հոգիներով փրկիչ համարվող արարածների՝ Աջին ու Ձախին, եւ հետեւում են, որ նրանք հոգ տանեն կործանված Երկիր մոլորակի մասին: Նրանց զրույցից պարզվում է, որ ողբերգությունը Աստծո պատիժը չէր, չնայած արդեն երկու հազար տարի է՝ ասում են, որ «Աստծո դատաստանը թափվելու է բոլորիս գլխին», սակայն «...վայ Homo sapiens–ի վարպետ ձեռքով սարքած, մարդու խելքի, ավելի ճիշտ՝ անխելքության պատճառով վրա հասած «ապոկալիպսիսի» հետեւանք է» (էջ 113):

Քննողը տարօրինակ ձայներ է լսում փորձանոթների դարակից ու ականա հայտնվում թերթատվող գրանցամատյանի էջերում՝ ժամանակների խաչմերուկում հանդիպելով Նարեկացուն: Ինչպես Դանթեն իր «Աստվածային կատակերգության» մեջ որպես ուղեկից ընտրում է Վեր-

² **Համբարձումյան Դ.**, Կանաչ մարգագետնի հմայքը, Եր., 2020, էջ 101:– Այսուհետ այս գրքից բոլոր մեջբերումների մոտ կնշվեն էջերը – Ն.Խ.:

գիլիոսին, այնպես էլ Համբարձումյանի հերոսն է վեպի ողջ ընթացքում առաջնորդվում «Մատյանի» խորհուրդներով եւ ունկնդիր լինում «ի խորոց սրտի» հնչող աղոթքներին: Մեղքը, արդարության քղամիդ հազած, նորանոր չարիքներ էր գործում. «էլ թոյն ու թարախ, չար ու քինախնդիր, դիսակալ ու նախանձ, էլ մաղձ, ատելություն, թշնամանք, որ մեկից մեկ հորինվել էին մարդկանց սպանելու ու կոտորելու համար» (էջ 27): Այս ամենին հետեւում է հեղինակի սարկազմը. նոր հերոսները «...ամբողջը նկարում էին, զցում «Գուգլ», կախում «Ֆեյսբուքի» ու «Ինսթագրամի» պատերին ու բըլ-բոլ զվարճանում: Վայ, ես ձեր մանկամիտ հերն եմ անիծել: Ու ամենամեծ պահանջարկը գաղտագողի նկարած նկարներն ունեին... մեծ ու փոքր պաշտոնյաների լոթի-փոթի գրիցների գաղտնալսումը...» (էջ 28):

Վիպական գործողությունները տեղի են ունենում մերթ տիեզերանման մութ կաթնագույն անսահմանության մեջ, մերթ անհայտ ու առեղծվածային, առաձգական պատերով ու օրորվող հատակով լաբորատորիայում, մերթ էլ ջրասույզ կանաչ մարգագետնում, ուր շատ քիչ թվով ողջ մնացած մարդիկ շարունակ լողում են պղտոր ջրերում:

Քննողի արթմնի տեսած երազում մեղքերի ծանրության տակ կործանված աշխարհի փրկությունը սկսվում է տաք ջրերի մեջ մարդկանց խոճապահար ձկնալողից³: Այս անգամ փրկությունը Նոյի տապանը չէ, չնայած մարդկության հույսը կարող է լինել մարդու սթափ ու տրամաբանված միտքը, եւ դժոխքի ելքի բանալին անհրաժեշտ է փնտրել բանականության մեջ, սակայն սրտի մոլորյալները մանկուրտ փրկիչների խոսքերին են տրված:

Հետաքրքիր հուշումներ ենք տեսնում ստեղծագործության ենթակառուցվածքում: Այն կազմված է ոչ թե սովորական գլուխներից կամ մասերից, այլ պարունակներից ու սուրահներից: Վեպը կազմող երկու հատվածներն էլ՝ գիրք 1-ին՝ «Աղետյալ երկրի մարդիկ», եւ գիրք 2-րդ՝ «Գրանցա «Մատյանի» տարընթերցում», հավասարաչափ կազմված են յոթական պարունակներից, սրանք էլ իրենց հերթին՝ յոթական սուրահներից: Առաջին հատվածի պարունակները հաշվվում են հաջորդական՝ 1-7, իսկ երկրորդ հատվածը հետհաշվարկ է՝ 7-1: Սա բումբերանգի օրենքն է, մարդ ինչ որ անի եւ որքան էլ փորձի իրենից հեռու

³ Կենտրոնամերիկյան մի լեզենդում պատմվում է, որ մի մարդ իր կնոջ ու երեխաների հետ վերապարում է ջրհեղեղից, իսկ մյուս բոլոր մարդիկ ձուկ են դառնում:

նետել պատասխանատվությունը, միեւնույն է, վաղ թե ուշ արածը ետ է գալու հաշիվ պահանջելու: Առեղծվածային խորհուրդ է ամփոփում նաեւ 7-ն իր միաստիկայով՝ որպէս հաջողություն խորհրդանշող թիվ ժողովրդական մտածողության մեջ: Պարունակները հիշեցնում են Դանթեի «Աստվածային կատակերգությունը», հատկապէս քավարանը, որը մեղքերից ազատվելու, դարձի ճանապարհների գոյության, ինչ-որ տեղ ոչ միտումնավոր մեղքի, ներման հույսի ու քավության խորհրդանիշն է:

Դ. Համբարձումյանի երկի որոշ պարունակներում իսկական դժոխքն է պատկերված, ուր մարդիկ ընկել են հասարակական, քաղաքական, բարոյական անկումների հետեւանքով: Սակայն կան նաեւ մեղքերը քավելու, դարձի բոլորակներ, ուր բանականության առաջնորդությամբ մարդը կազատվի նենգավոր չարականությունից, կվերադառնա սկզբին՝ դրախտային «կանաչ մարգագետին»:

Այս վեպը ստանում է նորանոր դրակներ, եւ ժամանակների պահանջներին համապատասխան՝ գլխավորապէս ակնարկում է, որ հիմնական օրենքն օրենքի բացակայությունն է: Վերջին տասնամյակներում խիստ նկատելի է ոչ միայն մարդու օտարումը բնությունից, որը բավականին չարչրկված թեմա է, այլեւ բնության պահպանումը դառնում է հասարակության մտահոգություններից մեկը: Բնապահպանության եւ բնօգտագործման վերաբերյալ ձեւավորվում եւ բուռն զարգացում է ապրում գիտությունների մի ամբողջ համակարգ, որը մարդկությանը հուզող հարցերի առաջին հորիզոնականում է:

Ֆենիմոր Կուպերի 1823 թ. տպագրված «Պիոներները կամ Սասքուեհաննայի աղբյուրները» համարվում է առաջին բնապահպանական վեպը: Հեղինակը ներկայացրել է վայրի բնության նվաճման հարցը, որը հանգեցրել է բացասական հետեւանքների: Դ. Համբարձումյանի վեպը եւս շոշափում է բնապահպանական մի շարք հարցեր՝ սթափության կոչ ուղղելով մարդկությանը: «Սա մարդկային Երկիր մոլորակն է, որը մի ժամանակ ջրի մակերեւոյթից բարձր լեռներ ու հովիտներ ու քաղաքներ ու գյուղեր է ունեցել, իսկ հիմա ամբողջովին ջրի տակ է անցել... Սա այն նույն մոլորակն է, որտեղ մարդիկ անխնա սպանում էին իրար՝ ատոմային ու ջրածնային ռումբեր նետելով իրար վրա... որտեղ մարդիկ սպանում էին կենդանիներին, թռչուններին ու ձկներին, ոչնչացնում էին անտառները..., աղտոտելով, սեւ ու յուղոտ վառելիք

թափելով եւ ապականելով երկրագնդի քաղցրահամ ու աղի ջրերը... Որտեղ... օդ էին արտանետվում թունավոր գազերը... հենց այդ պարզ պատճառով էլ, միլիոնավոր մարդիկ մեռնում էին աներեւակայելիորեն արագ տարածվող հիվանդություններից» (էջ 155):

«Կանաչ մարգագետնի հմայքը» վեպն ամբողջովին այլաբանություն է՝ վեպ-այլաբանություն, ինչպես օրինակ Նորայր Ադալյանի «Ապրկալիպսիս», «Համաճարակ», Ալեքսանդր Թոփչյանի «Կիրկե կղզին», Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք», Գուրգեն Խանջյանի «Նստիր Ա գնացքը», Հրաչ Սարիբեկյանի «Երկվորյակների արեւը», «Ապուշների ուղեւորությունը»⁴:

Դ. Համբարձումյանի վեպն աղերսներ ունի նաեւ արսուրդի հետ, ուստի կարող ենք դիտարկել որպես արսուրդ-վեպ: Վեպի այլակերպ կերպարները մեղքերի ծանրության ազդեցությամբ հայտնվում են ստորերկրյա ջրային աշխարհում, ուր գործող օրենքներն էապես տարբերվում են երկրում եղածներից:

Վեպը կարելի է համարել նաեւ «ֆանթազի» ժանրին պատկանող: Երկու տասնյակից ավելի պատմվածքներից, երկու վիպակից, երեք վեպից հետո Համբարձումյանը փորձել է մուտք գործել մի աշխարհ, ուր ժանրի միայն անվանումը՝ «սոսկ երեւակայածին» (թարգմանությունը՝ Դիանա Համբարձումյանի – Ն.Խ.), արդեն բավական է, որ սարսուռս անհնարինության առջեւ: Ողջ գրականությունն է անհնարինության հաղթահարման ջանք, եւ դժվար է շատ հեռանալ սեփական աշխարհայացքից, ինքն իրենից: Այս առիթով տեղին է մեջբերել Դ. Համբարձումյանի քիչ կատակ, շատ լուրջ խոսքը. «Ես էնքան հող եմ, որ իմ «ֆանթազի» էլ է հողոտ ստացվել... ինչքան ծանրութեթեւ եմ անում, ինչքան գրում եմ ու ջնջում, հավատում եմ, որ «դիանըսի» է ծնվում: Կատակում եմ: Բայց դե, լուրջ խոսքը կատակով են ասում»⁵, այսինքն՝ իրեն վերագրում է ժանրային ստեղծարարի դեր:

Վեպն իր մեջ համադրում է նաեւ քաղաքական ու հոգեբանական վեպի հատկանիշներ՝ իհարկե, ուշադրության թիրախում ունենալով ժա-

⁴ Հրաչ Սարիբեկյանի այս երկերը հեղինակի մեկնաբանությամբ անվանվում են նաեւ «երկաթուղային վեպ»:

⁵ Տե՛ս՝ <http://ardi.am/%D5%A4%D5%AB%D5%A1%D5%B6%D5%A1>

մանակակից իրականության մեջ խարխափող անհատի ճակատագիրը: Անչափելի են մարդկային մեղքերը, Նարեկացին «Մատյանում» սուկումով գրում է, որ եթե նժարվեն Արարատ լեռն ու մարդկային մեղքերը, երկրորդը հաստատ անհամեմատ ծանր կլինի: Անցել է տասը դար, Լեռն Խեչոյանն⁶ զգուշացնում է մերօրյա մարդուն զերծ մնալ «փշոտ մեղքերից», դրանցից վաղուց արնաքամ է լինում մարդկությունը: Կանցնի ես տասը կամ տասն անգամ տասը դար, եւ քանի դեռ «աղոթքին մասնակցած մի տղամարդ անթաքույց վավաշոտ հայացքով շոյում էր Աստվածամոր մերկ կուրծքը, գլխաշորով ճակատը կապած մի կին թաքուն հանգցնում էր վառվող մոմերը եւ հավաքելով լցնում գոգնոցի գրպանները, մի պատանի ծուռքերան ծաղրում էր անդամալույծ կնոջը, որ պատարագի սեղանն էր հարդարում խորանի ներսում» (էջ 244), դժվար չէ կոտակել, կապաշխարհի մարդը, թե՛ ավելի կայլակերպվի: Աստծո պատժի մասին զգուշացնում էր նաեւ Ալիս Հովհաննիսյանն իր «Լեւինական-Կումայրի-Գյումրի» վեպում⁷, որը 1988-ի ավերիչ երկրաշարժի արձագանքներից է: Այնքան էին մարդիկ անիծում իրար, որ որպես պատիժ իրականություն դարձան այդ անեծքները: Թվում է՝ պոկվել են անիծող լեզուները, եւ մարդն ուշքի է գալու, զոհերի կորստյան ցավն ու կսկիծը սթափեցնելու են նրան, սակայն մեղքն ավելի շատացավ:

Դ. Համբարձումյանի վեպը համաշխարհային հին ու նոր մշակույթների միաձուլման, մարդկության անցած ու անցնելիք ուղիների խաչաձեւման, նախկին ու ներկա խնդիրների, ճշտի ու սխալի, հասարակության անորոշ փնտրտուքի գեղարվեստական սինթեզն է:

«Մարդը ճիշտ ու ճիշտ իր մտքի հետեւանքն է» (էջ 49): Էքզիստենցիալիզմի հիմքերից դատելով՝ մարդն այն է, ինչպես ինքն իրացնում է: Ինքն է իրեն «նախագծողը»: Թե՛ Աստծո դատաստան լինի, թե՛ իրավական դատավարություն, ճանաչելու է մեղքերը, որ կարողանա քավել. հիշենք, որ Աստված առաջինը ներեց հանցագործ-մարդասպանին: Կանաչ մարգագետնի նախկին բնակիչներից անորոշության մեջ տատանվողները չնայած մարդկային հատուկ անուններով չեն անվանակոչվում, անգամ զուրկ են մարդկային կերպարանքից, սակայն

⁶ Տես՝ **Խեչոյան Լ.**, Փուշը, հայր, փուշը, Եր., 2011:

⁷ Տես՝ **Հովհաննիսյան Ա.**, Օղակը փակվում է, Եր., 2003, էջ 186-188:

ունեն գիտակցություն եւ խոսելու ունակություն, իսկ լեզուն ոսկեղենիկ հայերենն է: «Կում-կում ջուրը կուլ տալով՝ Աջը նայեց թեւին ամրացված ժամացույցին, որը գերժամանակակից, հրադիմացկուն ու ջրադիմացկուն համակարգիչ էր, մատը թույլ հպեց «ձայնագրություն» նշանին, եւ երբ ձեռքը մոտեցրեց ականջին, «Ընտրի՛ր լեզուն» հրահանգին ժամացույցը բարձրաձայն արձագանքեց՝ “Armenian”, ու ջրով մեկ տարածվելով՝ լավեց խոսակիցների հայերեն զրույցը» (էջ 111):

Մերժելով նոր իրականությունը՝ հեղինակը ոչ թե իրեն քաջաձանոթ, փաստերով առաջնորդվող միջոցներով, այլ հաճախ անտրամաբանական պատկերներով է փորձում կյանքի կոչել Երկիր մոլորակում ջրասույզ լինելուց առաջ տիրող անարդարություններից, դժբախտություններից, անազնվությունից, դավաճանությունից ծնված եւ բազմաթիվ անմարդկային արարքների դեմ անզորությունից «ինքն իրեն ուտող» ճարահատ քննադատությունը:

Տգետ մարդու անօրեն ցանկությունների զոհն է դարձել ոչ միայն բնությունը, այլեւ բնության զարդ աստվածակերպ մարդը: «Մարդն ինչ չի կարող անել, կամ մի բան, որ մարդը չի զորում անել... Աստծուց շատ Աստծուն հավատալ, Հուդայից ցավոտ մատնել, Պետրոսից ավելի ուրանալ, Աստծու Որդուն խաչել, աստվածանալ, դիվոտել, մարդու ԴԵԹ-ն փոխել. հարցնում եմ՝ մարդն ինչ չի կարող փոխել: Բա որ մարդն այդքան ամենակարող է, մի աշխարհ կործանելն ինչ է, որ չանի, հը՞» (էջ 168):

Դ. Համբարձումյանի վեպում մարդկային կերպարանքով արարածներ գրեթե չկան, նրանք այլակերպվել են իրենց արարքների հետեանքով: Աստված մեծ է եւ ողորմած, պահել է դարձի ճամփա՝ ապաշխարանքը ու մեղքերը ճանաչելու խիզախությունը: Անցյալի մեղքերը ճանաչելու ու շտկելու մեջ է կյանքի իմաստը, ինչն էլ վեպի հիմնական ասելիքն է:

Նարեկացու «Մատյանի» սկզբունքներով ուղղորդվելով՝ Դ. Համբարձումյանի վեպը փորձում է օգնել ընթանալ աստվածահաճո նորոյա ճանապարհով: Նարեկացին իր մատյանն անվանում է «կենաց գիրք», Համբարձումյանն իր մոլորակը՝ «կանաչ մարգագետին», որի հավերժական հմայքը կենաց գրքի պատվիրաններով է հարատեւելու:

Վեպն առանձնանում է մեծ թվով միջտեքստային եւ միջիրադարձային անդրադարձներով՝ Սիզիփոս ու Դանայոս, Դոն ժուան ու Յանուս, Համլետ ու Էնեական, Սպիտակի երկրաշարժից ու «Ալ-Քաիդա» կազմակերպության ահաբեկչություններից մինչեւ «փրկության ծրագիր», Ալիսը հրաշքների ու հայելիների աշխարհում, գորոյան հանգույց ու Հովնան Մարգարե, սեւազգեստ կին, որը «զինվոր որդու մեծադիր լուսանկարը, առանց շրջանակի մեջ առնելու, կրծքին սեղմած ցուցադրում էր անցուդարձող «չաղ, ուրախ, բախտավոր» (էջ 182) հասարակությանը, ու «խաչափայտին մեխված մի ձեռք» (էջ 224) երբեմնի մարդաշատ մի թանգարանում...

Այս տիրույթում է, որ հանդիպել են հայ ու համաշխարհային մշակույթի մի շարք անվանի անձինք՝ ժողե դը Սոզա Սարամագո, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Չինգիզ Այթմատով, Ներսես Շնորհալի, Անանիա Նարեկացի, Տիցերոն, Շեքսպիր, Լուիս Քերոլ, Լեոնարդո դա Վինչի, Վերգիլիոս, Գուստավ Կլիմտ, Էռնեստ Հեմենգուեյ, Ռընե Դեկարտ, Վիվալդի, Ֆրոյդ, Էվկլիդես, Մարկո Ռոտկո եւ ուրիշներ:

Կորուսյալ երկրից Կանաչ մարգագետին վերադարձի ճանապարհին հանդիպում ենք տոննանոց խաչը վզից կախ վանականի, սեւ բեղերը սրած տղամարդու, մուգ կապույտ աչքերով ծերունի Վովային, Բենթլի Սուրոյին ու նրա ապօրինի որդուն, փողոցները չափչփող տիկին Արուսին, հոգեբուժարանի տնօրենին ու բժշկուհուն, Աջի ու Ձախի կարծիքով, միանգամայն առողջ դեղնակտուցին, ոսկեծամիկին, սպիտակամորուսին, ճերմակազգեստ տարեց կանանց ու տղամարդկանց՝ հոգեբուժարանից, ասացողին, ով ճշգրտությամբ նկարագրում էր աշխարհի նորոգ պատկերը, Էկրաններից իրար հետ հաղորդակցվող աշակերտներին ու տան ծանր լռության պատճառով բանտ վերադարձած ծերունուն:

Ծավալուն է նաեւ վեպում կատարվող գործողությունների աշխարհագրությունը՝ տիեզերքի սեւ խոռոչներից մինչեւ «Արտաշի մոտ» նախաճաշելու, Արարատ լեռան գագաթին իջած Նոյի տապանից մինչեւ ռետինե առածգական պատերով լաբորատորիա, Քրիստոսից առաջ գոյություն ունեցած Պերգամոն քաղաքից մինչեւ «Ձմեռային պալատ» ու Բաղրամյան 26, Ձիթենյանց լեռից մինչեւ Ամուլ սար, Կարմիր բլուրից Ռայխստագի գրավում, Սկյութիայից Նինվե, Էրմիտաժից հայաս-

տանյան մի վիրահատարան, մութ ու անորոշ անտառից մինչև գորդյան հանգույց հիշեցնող խաչուղիներ, Կանարյան կղզիներից Հին Հռոմով մինչև Վահանակների մոլորակ ու «Եզրասի երկրորդ գիրքը» ձեռքներին՝ Մատենադարան՝ «Մշո ճառընտիրը» թերթելու: Իհարկե, Երկիրը կործանած մեղավորները միայն քրիստոնյա չեն. այդ է պատճառը, որ վերադարձի պարունակներում հերոսները կարող են այցելել ինչպես եկեղեցի, այնպես էլ մզկիթ կամ սինագոգ ու բուդդայականների տաճար:

Աստված գալիս է դեպի մեզ եւ քանի չի շրջվել, ու ինքը եւս չի փորձում «Երկրի հակառակ կողմը»⁸ ցույց տալ, անհրաժեշտ է շտապել մեղքերը քավելու: Եկել է այն ժամանակը, որ քաղաքակրթությունը փրկելու հույսը ոչ թե գերզարգացած տեխնոլոգիաների կիրառությամբ է իրականանալու, այլ մարդու հոգու վերածննդի շնորհիվ:

Վեպը չունի վերջաբան: «0» խորհրդանշական սուրահն ավարտվում է վերադարձով իրականություն: Համբարձումյանն այդ մասին գրում է. «...Մեր քաղաքակրթության ավերումը հետաձգվում է, մեզ հնարավորություն է տրվում արթնանալ եւ սկսել «նորոգող, կենսահաստատ» կետից»:

Չգիտես ինչու, բոլորն աշխարհը տեսնում են ծուռ հայելիների մեջ, հաճախ անճոռնի ու հազվադեպ՝ ծիծաղելի: Եվ «բոլորը կարծում են, թե շուտով կգա ժամանակը, մինչդեռ ժամանակը միայն ու միայն հեռանում է» (էջ 102), հարկավոր է հասցնել ապրել, իսկ ապրելու համար ապրելը բավարար չէ, ապրեցնել է պետք: Աստված մի անգամ արդեն քառուր համակարգել է, խավարը ցրել ու ստեղծել ավետյաց երկիր. «Երանի՜ լիներ այն, ինչը մի անգամ արդեն եղել էր: Աստված ասաց՝ լույս լինի, եւ լույս եղավ: «Երանի՜ լիներ: Երանի՜» (էջ 42):

Հուսո հանգրվան լաբորատորիան, որը մինչ այդ Լուսավորչի կանթեղի նման կախված էր օդում եւ տեսանելի էր միայն հավատացողին, այժմ պինդ կանգնած է հողին: 0-ն առաջ ու ետի, դրականի ու բացասականի հանդիպման կետն է, որտեղից գուցե կարելի է սկսել նորից: Եվ այս անգամ երեւի ամեն ինչ բարեհաջող լինի, այլ ելք չունենք, հատկապես ծաղիկների հանդեպ բարդիների ցուցաբերած հոգատա-

⁸ Տե՛ս՝ **Փաշինյան Ն.**, Երկրի հակառակ կողմը, Եր., 2018:

րությունից ենթադրելով. «Կանաչ մարգագետնի մեջտեղում բարդիների ստվերներն ամոթխաճ գլուխ գլխի էին տվել, որ ծաղիկների խաղացկուն գույները չխամրեն խանձող արեւի թեժությունից» (էջ 246):

SUMMARY

IN THE FOLDERS OF DIANA HAMBARDZUMYAN'S NOVEL “THE BEAUTY OF THE GREEN MEADOW”

Naira Khachatryan

The auothor discusses Diana Hambardzumyan's latest novel “The Beauty of the Green Meadow” and tries to show context of a number of allegorical images presented in the novel, which are not plain noticeable. In parallel with the actions of imaginary characters, the author's reflections are combined with ancient, known from Christian cultures, mythical images and episodes, spices of folk thinking, words and things, a polysyllabic combination of archetypal characters and episodes, vocabulary and linguistics of world culture, characteristic to ancient and new, even thieves' world. The folders of this novel remind Dante's “Divine Comedy”, especially purgatory, which is a symbol of deliverance from sins, the existence of ways of repentance, the hope of forgiveness for committing some unintentional sins.